

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐՈՐ ԱՐԵՐՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: <u>info@westernprelacy.org</u> Website: <u>www.westernprelacy.org</u>



ՅՈԳԵՅԱՆԳԻՍՏ Տ. ՍՄԲԱՏ ԱՐՔ. ԼԱՓԱՃԵԱՆԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ

Յոգելոյս Տ. Սմբատ Արք. Լափաճեանի վախճանման Ա. տարելիցին առիթով, Կիրակի, 17 Յուլիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան նախագահեց Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին, ներկայ հաւատացեալներուն ուղղեց իր պատգամն ու յաւարտ Ս. Պատարագի՝ նախագահեց հոգեհանգստեան արարողութեան։ Յոգեհանգիստը տեղի ունեցաւ հոգելոյս Սրբազանին շիրիմին առջեւ։

Պատարագիչն էր Մայր Տաճարի հոգեւոր հովիւներեն Արժ. Տ. Նարեկ Աւ. Քինյ. Փեհլիվանեան։ Ներկայ էին Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան, Ազգային Վարչութեան անդամներեն Տիար Վահան Պզտիկեան, Ազգ. Երեսփոխանական Ժողովի անդամներ, Մայր Տաճարի հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան անդամներ, հայկական կազմակերպութեանց ու քոյր միութեանց ներկայացուցիչներ, որոնք եկած էին յարգելու հոգելոյս Սրբազանին լիշատակը։

Իր պատգամին մէջ, Առաջնորդ Սրբացանը կանգ առաւ վախճանեալ Սրբազանին կեանքի իրագործումներուն ու անոնցմէ բխող լիշատակներուն առջեւ. «Արդէն տարի մո անցած է այն օրէն, երբ Սմբատ Սոբացանո երկրաւոր այս կեանքին հրաժեշտ տուաւ, սակայն իր լիշատակները վառ կր մնան բոլորիս մօտ, հոգելոյս Սոբացանը երախտաշատ հոգեւորական մոն էր ու հաւատարիմ ծառան Աստուծոլ, մեր եկեղեցւոլ եւ ազգին. ահա թէ ինչո՛ւ կր փնտռենք իր ներկալութիւնը», ըսաւ Առաջնորդ Սրբացանը, ու հոգելոյս Սրբազանին կեանքի ծառայութիւնները նմանցնելով Ս. Գրային օրուան ընթերցումին Որոմի առակին մէջ նշուած լաւ սերմեր ցանող մարդուն՝ լիշեցուց, որ ան բազմաթիւ բարի սերմեր ցանած էր իր կեանքի րնթացքին, քաջ գիտնալով, որ այսօր ցանուածը վաղը պիտի ծաղկի ու բերքաւորուի։ «Իբրեւ բարի հովիւ ու սերմնացան, ան Աստուծոլ սէրը, Աստուծոլ խօսքն ու հաւատքի սերմեր ցանեց իր հօտի սիրտերուն ու միտքերուն մեջ, վստահ ըլլալով, որ բարի սերմերը պիտի ծյարձակուին եւ վաղուան հունձքը կախում ունի այսօրուան ցանուածեն։ Սմբատ Սրբազանը սերունդներ դաստիարակեց, լուսաւորեց սիրտեր ու միտքեր, ներշնչում տուաւ սերունդներու, եւ մենք այսօր կր շարունակենք քաղել իր ցանած սերմերուն բարի պտուղները», ըսաւ Առաջնորդ Սրբացանը։ Ան այս առիթով աղօթը բարձրացուց առ Աստուած, որպէսցի վախճանեալ Սրբացանի հոգւոյն պարգեւէ յաւիտենական հանգիստ ու զայն դասէ արդարներու շարքին։

Եկեղեցական արարողութիւններեն ետք, Տաճարին կից «Բաղրամեան» սրահին մեջ տեղի ունեցաւ հոգեճաշ, հիւրընկալութեամբ եկեղեցւոյ Յովիւներուն, հոգաբարձութեան եւ Տիկնանց միութեան։ Ներկաները ոգեկոչեցին վախճանեալ Սրբազանին լիշատակը։

REQUEIM SERVICE ON THE ONE YEAR ANNIVERSARY OF THE PASSING OF ARCHBISHOP SUMBAT LAPAJIAN

On Sunday, July 17th, 2011, the one year anniversary of the passing of Archbishop Sumbat Lapajian was observed at Holy Cross Cathedral in Montebello. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Divine Liturgy, delivered the sermon and presided over the requiem service which was held in the Church courtyard at the gravesite of the late Archbishop.

Divine Liturgy was celebrated by Archpriest Fr. Nareg Pehlivanian.

Among those in attendance to honor the memory of Archbishop Sumbat Lapajian were H.E. Archbishop Yeprem Tabakian, Executive Council member Mr. Vahan Bezdikian, Parish Delegates, Board of Trustees and Ladies Guild members, and representatives of sister organizations.

During his sermon, the Prelate reflected on the life and works of Archbishop Lapajian stating, "A year has passed since we lost this remarkable man and clergyman but his absence is still being felt, which is a testament to how much he was loved and admired by our community". Tying in the day's Scripture reading to the anniversary of Archbishop Lapajian's passing, the Prelate said, "It is fitting that the day's Gospel reading is the Parable of the Tares, for those who knew Archbishop Lapajian can liken him to the man in the parable who planted good seeds in his field. He was indeed a good shepherd and a good laborer for our Lord. Knowing well that the harvest of tomorrow depends on the seeds one sows today, he planted the seeds of God's love, of God's word, and of faith into the hearts, minds, and souls of his flock so that they would hear the Word, accept it, and bear fruit. It is said if you plant the seeds of God's Word in your heart and speak it out of your mouth, it will produce life for you. By doing just that, Archbishop Lapajian educated, enlightened, and inspired generations, and today we continue to reap the plentiful harvest of the seeds he planted long ago." The Prelate concluded his message by praying for Archbishop Lapajian's soul to rest in peace in the glory and the kingdom of our Lord Almighty.

A memorial luncheon followed at "Bagramian" Hall hosted by the parish Pastors, Board of Trustees, and Ladies Guild, during which the life and memory of Archbishop Lapajian was honored.